ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/813 «12» 07 2021թ.

Ձեր

<<Սոֆթ Թրեյդ>> ՍՊԸ (ՀՎՀՀ 01263355)
Ք.Երևան, Շերամի փողոց 90/6
էլ. հասցե՝ softtrade.tender@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և <<Սոֆթ Թրեյդ>> ՍՊԸ-ի միջև 10 մայիսի 2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1 ծածկագրով կենցաղային և հիգիենիկ նյութերի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Սոֆթ Թրեյդ'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և ''Իմպորտ Թրեյդ'' ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Սոֆթ Թրեյդ'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 3 143 680 /երեք միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ, և տուժանքի համաձայնագիրը՝ պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 314 368 /երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ոստիկանության գնդապետ ***Վ.Մովսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39